



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«26» 07 201 թ.

No 06/3-3/42766-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 11.05.2018թ. NՊ-33 գրության

Հարգելի պարոն Հանքարձույան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ
հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:


Հայտնում ենք, որ Ձեր կողմից նկարագրված գործունեությունը դասակարգելու
նպատակով անհրաժեշտություն է առաջացել նախ դասակարգել տվյալ
գործունեության տեսակի արդյունքը (արտադրանքը): Այսպես, ՀՀ էկոնոմիկայի
նախարարի 19.09.2013թ. N875-Ն հրամանով հաստատված «Արտադրանքի
դասակարգում ըստ գործունեության տեսակների» դասակարգչի (ԱԴԳՏ-2013)
համաձայն՝ Ձեր կողմից նկարագրված գործունեության արդյունքը (արտադրանքը)
դասվում է «A (ԷՅ) Գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և
ձկնաբուծական տնտեսության արտադրանք» բաժնի «01. Բուսաբուծության,

կենդանիների բուծման, որսորդության բնագավառի արտադրանք և հարակից ծառայություններ» հատվածի «01.4 կենդանի կենդանիներ և կենդանիների բուծման բնագավառի արտադրանք» խմբի «01.46 Խոզեր կենդանի» դասի «01.46.1 Խոզեր կենդանի» կարգի «01.46.10 Խոզեր կենդանի» ենթակարգին: Նշենք նաև, որ ԱԴԳՏ-2013 մշակման հիմքում ընկած «Statistical Classification of Products by Activity, (Version 2.1)» դասակարգչի պարզաբանման համաձայն համապատասխան ենթակարգը («01.46.10 Խոզեր կենդանի») բացի կենդանի խոզերից ներառում է նաև խոզերի սերմնահեղուկը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ խնդրո առարկա գործունեությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N874-Ն հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» համաձայն, դասվում է «A (ԷՅ) Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն» բաժնի «01. Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ» հատվածի «01.4 Անասնաբուծություն» խմբի «01.46 Խոզերի բուծում» դասի «01.46.0 Խոզերի բուծում» ենթադասին, հետևաբար Ձեր գրությամբ նշված դեպքում կիրառելի են ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 7/26/2018 16:14:58 GMT+4

Signed by: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.' ՎԱՇԿՎ Հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ.՝ (060) 544646

